

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ տարեկան ընդհ. Անդամական ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, 25 Փետրուար 1979, Կ.Ե.ժամը 4-ին, աւելի քան ժամ մը յապաղումով:

Ներկայ էին՝ 582 տրատու անդամներ:

Ժողովիս նախագահ՝ Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեան հրաւիրեց անդամները, որպէսզի յոտնկայս Տէրուական Աղօթքով բացումը կատարուի այս խիստ կարեւոր ժողովին, որուն գումարումը ըստ Հայց. Առաք. Եկեղեցւոյ համաձայն Ամերիկայի Արեւելեան Թեմի կանոնագիր-ծրագրին, օրինական նկատուեցաւ ծխական Խորհուրդի ատենապետ Պրն. Արթօ Պասամեանի կողմէ:

F. 10

Դիւանի ԸՆՏՐՈՒԹԻՒՆ:- Գաղտնի քուէարկութեամբ, ժողովը օրուան դիւանի ատենապետ ընտրեց Պրն. Յակոբ Բէսթէքեանը, իսկ միաձայնութեամբ ատենադպիր նշանակուեցան՝ Տիկ. Վարդուհի Պալեան, Պրնք. Վահան Գազանմեան եւ Գէորգ Մանուկեան:

Պրն. Յակոբ Բէսթէքեան շնորհակալութիւն յայտնեց անդամներուն, իր անձին հանդէպ ցոյց տրուած վստահութեան համար եւ անմիջապէս ձեռնարկեց օրակարգի նիւթերու գործադրութեան:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ:- Նկատի ունենալով, որ ժողովը պէտք եղածէն շատ աւելի դանդաղ կ'ընթանար, որոշուեցաւ անյապաղ ձեռնարկել ծխական Խորհուրդի, Ընտրողական Յանձնախումբի եւ հաշուէ - քննիչ Մարմնի անդամներու ընտրութեան:

Ընտրութիւնները կատարուեցան ընդունուած մեթոտներու եւ կանոններու համաձայն եւ մինչեւ վերջնական արդիւնքներու երեւան զալը ժողովս զբաղեցաւ օրակարգի ընթացիկ հարցերով:

ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ:- Պրն. Գէորգ Մանուկեան կարդաց նախորդ Անդամական ժողովի ատենագրութիւնը, զոր միաձայնութեամբ վաւերացուեցաւ:

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՆԻ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ:- Նախքան վաւերացումը սոյն տեղեկատուութեան, Պրն. Սուրէն Շիշմանեան բացատրութիւններ տուաւ, թէ ինչո՞ւ ծխական Խորհուրդի իր անդամի պատասխանատուութիւնները լիովին չէր կարողացած զլուխ հանել:

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ:- Կարգ մը տպագրական սխալներու մատնանշումէն ու մըշողումէն ետք, ժողովը գնահատանքով վաւերացուց այս տեղեկատուութիւնը:

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԵՆԹԱ-ՅԱՆՁՆԱՅԻՆՄԱՐԿԵՐՈՒ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ:- Ժողովը ապա զբաղեցաւ ծխական Խորհուրդի ենթակայ յանձնախումբերու տեղեկատուութիւններով, եւ հիացումով ու գնահատանքով արտայայտուեցաւ տարուած աշխատանքներուն ու գործունէութեանց մասին:

ԶԱՆԱԶԱՆՔ: ԲՈՒՐԱՍՏԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ:- Անդրադառնալով Եկեղեցւոյս պաշտօնաթերթ ԲՈՒՐԱՍՏԱՆ ի մէջ երեւցած կարգ մը գրութիւններուն, Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեան հաստատեց, թէ ԲՈՒՐԱՍՏԱՆը երբեւիցէ նպատակ չէ ունեցած անպատշաճ վերագրումներու առարկայ դարձնել ոեւէ անդամ:

ԳԱՆԱՏԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԹԵՄԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԱՂԵՐՍԱԳՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ:- Թեր ու դէմ յայտնուած կարծիքներէ ետք, յարմար նկատուեցաւ զաղտնի քուէարկութեամբ որոշել այս հարցը: Քուէարկութեան արդիւնքը՝ 73-ի դէմ 78 քուէյով որոշուեցաւ, որ աղերսագիր

Handwritten signature

Մը դրկուի Ամերիկայի Արեւելեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տէր Թորգոմ Արք. Մանուկեանին, որպէսզի նորին Սրբազնութիւնն ալ իր կարգին խնդրէ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. Վեհափառէն, որ իր քարեհաճ ուշադրութեան առարկայ դարձնէ այս խիստ կարեւոր կէտը, եւ իր սուրբ օրհնութիւններով արտօնէ հաստատումը Գանատայի Առաջնորդական առանձին Թեմի մը:

Այս աղերսագրին հակառակ քուէարկեցին 73 հոգի, իսկ երեք անդամներ մնացին ձեռնպահ:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ:- Յանձնարարուեցաւ նորընտիր ծխական Խորհուրդի անդամներու նկատողութեան յանձնել օգնական-քարտու դարի մը պարագան, նկատի ունենալով որ ներկայ քարտուդար՝ Պրն. Վահէ Բէթլի արդէն իսկ չափազանց ծանրաբեռնուած էր:

ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ:- Ընտրողական Յանձնախումբի առենապետ՝ Տոքթ. Արթօ Տէմիրճեան յայտարարեց, թէ քուէներու համրանքը սկսած էր ժամը 20.45-ին եւ վերջացած՝ յաջորդ օր առաւօտեան ժամը 1.45-ին:

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ՍՏԱՅԱԾ ԲՈՒՆԵՆԵՐՈՎ:-

1.- Տոքթ. Յակոբ Գարակէօզ	544 քուէ
2.- Պրն. Յակոբ Բէսթէքեան	314 "
3.- Տոքթ. Պերճ Արթինեան	294 "
4.- Պրն. Միսաք Կուտուղեան	286 "
5.- Պրն. Վահէ Բէրէսթէճեան	283 "
ՊԱՋԵՍՏԻՆԵՐ:-	
6.- Պրն. Դարօ Ալեքեան	278 "
7.- Պրն. Ժիրայր Այվատեան	276 "
8.- Պրն. Գէորգ ծանգուլ	263 "
9.- Տիկ. Սրբուհի Տէր Օհաննէսեան	261 քուէ
19.- Պրն. Հրայր Ժիհանեան	2 "

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՆԱՍՈՒՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐ:-

1.- Տոքթ. Արթօ Տէմիրճեան	548 քուէ
2.- Տոքթ. Յովհաննէս Պալապանեան	542 քուէ
3.- Պրն. Վահէ Բէթլի	301 քուէ
4.- Պրն. Բերովբէ Պտուկեան	300 "
5.- Պրն. Ժիրայր Կազէրեան	288 "

ՊԱՋԵՍՏԻՆԵՐ:-

6.- Պրն. Լեւոն Կիւլիւղեան	266 "
7.- Պրն. Ալետիս Ժիհանեան	253 "
8.- Տիկ. Անահիտ Գալայճեան	250 "
9.- Պրն. Նուպար Աղազարեան	29 "
10.- Պրն. Յարութիւն Սրմաքէշեան	14 "

ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐ:-

1.- Պրն. Անդրանիկ Չտորճեան	289 "
2.- Պրն. Վահագն Արապեան	289 "
3.- Պրն. Արտէն Տէրվիշեան	286 "


ՊԱՋԵՍՏԻՆԵՐ:-

4.- Պրն. Պերճ Էսէն	284 "
5.- Պրն. Իվան Բրուտեան	279 "
6.- Պրն. Գէորգ Մանուկեան	253 "




Տարեկան Անդամական Ընդհանուր Ժողովը փակուեցաւ Երկուշաբթի,
26 Փետրուար 1979, առաւօտեան ժամը 2-ին, Հոգշ. Տ. Պարէտ Վրդ.
Երէցեանի օրհնութեամբ եւ պատգամով, որ իւրաքանչիւր անդամ զօ-
րավիզ կանգնի նորընտիր ծխական Խորհուրդի անդամներուն:


Ի դիմաց Անդամական Ընդհանուր Ժողովի Դիւանին




Տ. ՊԱՐԷՏ ՎՐԴ. ԵՐԷՑԵԱՆ
Նախագահ



ՅԱԿՈՒ ԲԷՍՔԷՐԵԱՆ
Ատենապետ



ՎԱՐԴՈՒՅԻ ՊԱԼԵԱՆ
Բ. Ատենադպիր



ՎԱՀԱՆ ԳԱԶԱՆՃԵԱՆ
Բ. Ատենադպիր



ԳԷՈՐԳ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ա. Ատենադպիր